ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/02

Բողոքի ներկայացման ամսաթիվը՝ 11.01.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 65-րդ չափաբաժնի մասով:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7
2) Պատվիրատուի անվանումը՝ <<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Պ. Սևակի 5

3) Գնանշման հարցման ծածկագիրը՝ «ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02»
և առարկան՝ <<Բժշկական նշանակության ապրանքների ձեռք բերում>>

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ն <<Բժշկական նշանակության ապրանքների>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել <<ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02>> ծածկագրով գնանշման հարցման մասին (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերի թվով 93 չափաբաժիններից <<Խաչպար>> ՍՊԸ-ն բողոքարկում է թիվ 65-րդ չափաբաժինը (կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները):

Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> Հավելված թիվ 1-ի <<**անվանումը**>> սյունակում թիվ 65-րդ չափաբաժնի մասով պահանջվող ապրանքի համար գրված է <<**Անգիոգրաֆիկ ստենտավորման**>> անվանումը, որի <<**տեխնիկական բնութագիրը**>> սյունակում ներառված պահանջներում առկա է նաև <<**մեդֆլյատոր**>> անվանումով ապրանքի առկայությունը, այն դեպքում, երբ այդ անվանումով ապրանքը հանդիսանում է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկա և որպես այդպիսին՝ պահանջվում է Հրավերի թիվ 22-րդ չափաբաժնի մասով (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ի <<ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից <<Բժշկական նշանակության ապրանքների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը՝ Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի <<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ի <<ԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը <<ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02>> ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի երկրորդ մասի՝ **<<2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը>>**:

<<Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական կենտրոն>> ՓԲԸ-ի <<ՍԳԻ-ԳՀԱՊՁԲ-22/02>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդված երկրորդ մասով սահմանված պահանջների խախտում՝ Հրավերի թիվ 65-րդ չափաբաժնի մասով, քանի որ տվյալ չափաբաժնով պահանջվող <<**Անգիոգրաֆիկ ստենտավորման**>> անվանումը ունեցող ապրանքի տեխնիկական բնութագրերում Պատվիրատուն խմբավորել է նաև <<**մեդֆլյատոր**>> անվանումով ապրանքը, որը հանդիսանում է առանձին բնութագրեր ունեցող գնմանա առարկա, և որպես այդպիսին՝ պահանջվում է Հրավերի թիվ 22-րդ չափաբաժնի մասով:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 3 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Սմբատ Բալասանյան

11 հունվարի 2022թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, հ/հ 2050922055871001